

ՀՈԴՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

A4 ձևաչափի թղթի վրա

լուսանցքները վերևից (Top)՝ 20 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 30 մմ, աջից (Right)՝ 10 մմ

Տառատեսակը

հայերենի դեպքում՝ Unicode (Sylfaen),

ռուսերենի և անգլերենի դեպքում՝ Times Neu Roman

տառաչափը՝ 12

Միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1.5, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ

Չօգտագործել մեկից ավել տառաբացակ (пробел)

Առաջին էջի վերևում, մեջտեղում (Center), առանց գլխատառերի տրվում է վերնագիրը (Bold):

Հաջորդիվ.

աջում (Align Text Right)՝ ազգանունը, անունը (Bold, Italic),

ֆակուլտետը, մասնագիտությունը, կուրսը (Italic),

դեկավարի ազգանունը, անունը, կոչումը (Italic),

թողնել մեկ տող բացատ,

«Հանգուցային բառեր.» արտահայտությունը (Bold, Italic) և 4-8 բառ հանգուցայինբառեր կամ բառակապակցություններ (Italic):

Աղյուսակները, նկարները, գծագրական պատկերները պետք է ունենան համարակալում, վերնագրային բացատություն՝ 10 տառաչափով, թավ, շեղ (Bold, Italic): Դրանց բարձրությունը չպետք է գերազանցի 170 մմ, լայնությունը՝ 110 մմ: Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, շեղ (Italic), իսկ հիմնականները՝ առանձին տողով, մեջտեղում, կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր [()] փակագծերի մեջ:

Այն հոդվածների համար, որոնք պարունակում են խորհրդանշաններ և Sylfaen տառատեսակի մեջ չկան, պարտադիր է նաև դրանց էլեկտրոնային ֆոնտը:

Տեքստում հղումները տրվում են կամ ուղղանկյուն փակագծերում []¹, կամ էջի ներքևում՝ հերթական համարակալմամբ:

Հաջորդ տողից սկսել տեքստը:

Տեքստում հղումները տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ []¹:

Ծանոթագրությունները տրվում են էջի ներքևում՝ աճման կարգով համարակալված:

Տեքստի վերջում գրվում է «Գրականություն» բառը (Bold) առանց գլխատառերի: Հաջորդ տողից՝ գրականության ցանկը՝ այբբենական կարգով համարակալված²:

Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները երկու լեզուներով³, որոնք իրենց բովանդակությամբ և առանցքային բառերով պետք է լինեն նույնական և բաղկացած լինեն առնվազն 50-60 բառից: